ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆ
(ՄՈՒՇ–ՏԱՐՈՆ)

1. ԼՈՒՍ ՈՒ ՄՈՒԹ ԱՇԽԱՐՔ

Կէղնի թագավոր մը։ Կունենա իրեք տղա։ Ուր տղեկներ կէլնին չափահաս կէղնին։

Թագավորին բաղ մը կէղնի, ինչ խադար տարի ըդ բաղ պտուղ կբըռնա, յոթ գլխցեն դև կիգա կուտա։

Կասա.—Օր դուք զէդա դև չհաղթեք, պտի ընձի տղուքեն չէնիք։

Տղեկներ կէրթան զբաղ կտիրին։

Առջին շաբթուն ջոջ ախբեր կէրթա բաղի առեչ։ Յոթ գլխցեն դև կտեսնա, օր կիգա, տղեն կվախենա, կմտնի ծառի թփերու տակ։ Դև ինչ օր կա՝ կչարգա, կուտա, կէրթա։

Ջոջ ախբոր շաբաթ կլմնա, միջնեկ ախբեր կիգա առեչ։

Միջնեկ ախբեր լա կտեսնա օր դև էկավ։ Էն լա կվախենա։ Կմտնի ծառի թփերու մեջ, դև զբաղ կուտա, կէրթա։

Էն ախբոր շաբաթ օր կլմնա, պզտիկ ախբեր կիգա առեչ։ Կտեսնա օր, դև էկավ։ Համա զինք կիտա ծառի տալդեն։ Կքաշա զթուր, մեկ կզարկա։ Օր կզարկա, դևին անկաշ մը կկտրա։ Կիգա տուն, ախբրտանց թարիֆ կէնա։ Կէլնին, իրեք ախբեր խիդրաց կէրթան։

Դևի արուն օր թափեր ա, կընկնին արնի ռեճքեր, կէրթան։ Կէրթան դևի ծկի բերնին կայնին։

Միջնեկ ախբեր կիշուն, շատ քիչ կիշուն, կըսե.—Ամա՜ն, ես չըմ դիմանա, զիս հանեք։

Հետո կիշուն զջոջ ախբեր, էն լա կըսե.—Ամա՜ն, ես վառա, զիս հանեք։

Զէն լա կհանին։

Պղտիկ ախբեր կըսա.—Զիս իշցեք, ես քանի կէսիմ՝ ես վառա, դու զիս էլ իշցեք։

Կիշուն, կէրթա դևու ղռան վերեն կկայնի։ Դուռ կբանա, կմտնի ներս, կտեսնա, օր դև գլուխ դրի կնկան շոքին, քնիր ա։

Կըսա.— Այ տղա, դու հ՝որի՞ն էկար էդա տեղ։ Ջոջ դև օր քնուց էլավ, քու ջոջ բրդուճ, քու անկաջ կթողա։

Ջոջ դևու կնիկ լա շատ խորոտ կնիկ կէղի։

Տղեն կըսա.— Ապա ես ի՞նչ էնիմ էդրա ուժ հ՝իմնամ։

Կըսա.— Ուր թուր հանդե կպրի կարաս, էրթաս էմալ քաշիս, իմալ մաղն ի խմորեն։ Համա ուր թուր առնի կարսի բերան, կէլնի զքու ջոջ բրդուճ զքու անկաջ կթողա։

Տղեն կէրթա, զթուր կքաշա։

Կնիկ կըսա.— Հմալ զարկիս ուր յոթ գլուխ լա սաղ թռուս։ Օր զյոթ գլուխ լա թռուցիր, դևեն կըսա՝ մեկ լա զարկ, էլ դու չըզարկիս, էնի կսաղնա։ Ըսա՝ մարդու դըրբ օր կա, մեկ հաղ ա, էրկու հաղ չէղնի։

Իմալ օր կնիկ կըստ, հմալ կէնա։ Էնտեղ զդև կսպանա։ Կնկաց զդևու տներու բալնիքներ կուզա։ Իրեք տան բալնիք կնկաց կառնի։ Կէրթա դուռ մը կբանա, տեսնա օր միշնեկ դև հոդի գլուխ դրեր է կնկա շոքին ու քնի։

Կնիկ կըսա.— Այ հողածին, դու հ՝որի՞ էկար էդա տեղ, օր միշնեկ դև էլնի, քու ջոջ բրդուջ քու անկաջ կթողա։

Կըսա.— Էդրա ուժ ի՞նչ ա, զիս հասկցու։

Էտրան լե իմալ զէն մեկէլ դև կսպանա։

Բանա զմեկել դուռ։ Տեսնա օր պզտիկ դև հոդի քնուկ ա։ Զէտ լա հոդի կսպանա։

Իրեք դևի կնիկ լա շատ խորոտ կէղնին։ Տղեն կըսա.— Մենք լա իրեք ախբեր ինք։ Ջոջ դևի կնիկ՝ ջոջ ախբոր, միշնեկ դևի կնիկ լա՝ միշնեկ ախբոր, պզտիկ լա՝ ընձի։

Կքոմա զիրեք դևի ապրանք լա, կբերա ծկի բերան, զիրեք կնիկ լա կբերա ծկի բերան։ Առաջ ախբրտանց կըսա.—Զապրանքներ քաշեք, հանեք։

Զապրանքներ թավ քաշին, հանին։ Հետո կքաշին ջոջ դևու կնիկ, կքաշին միշնեկ դևու կնիկ, կմնա պզտիկ դևի կնիկ։ Պզտիկ ախբեր կըսա.— Դու էլի։

Կնիկ լե կըսա.— Չէ, ոլա, դու էլի առաջ։ Օր ես էլնիմ հ՝առեչ, զքզի չըն հանի։

Տղեն կըսա.— Անկարելի ա, օր դու հ՝առեչ չէլնիս, ես չըմ էլնի։

Կնիկ կըսա.— Օր ես էլա, զքըզի չհանեցին, դուռ մը կա, իրեք ձի ցկիգան ջուր կխմին։ Մեկ սև ա, մեկ սպիտակ ա, մեկ կարմիր ա։ Հ՝առեչ

զքրզի թալիս վրը սևին, սև կթալա վրը կարմրին, կարմիր թալա վրը սիպտկին, սպիտակ թալա զքրզի լուս աշխարք։

Կքաշին զկնիկ հանին։ Պզտիկ դևի կնիկ շատ խորոտ կէզնի, էլ զպզտիկ ախբեր չրն հանի։ Տղեն կէրթա կայնի գռան մոտ։ Տեսնա օր իրեք ձի էկան ջուր կխմին։ Հ՝առեչ զինք կթալա վրը սիպտկին, սիպտակ կթալա վրը կարմրին, կարմիր կթալա վրը սևին, սև կիչու հ՝անդոնդք։

Տղեն կէրթա մութ աշխարք։ Ձեռով կափելթրփա, պառվու մը դուռ կգտնա։ Ջդուռ կբանա, կտեսնա օր պառավ մը հ՝ինքն ա։ Պառվուն տեղ չէղնի։

Կըսա.— Ջոշո, ճանկ մ՝ օսկի քրզի, տեղ մը տաս ընձի, ես քեզի տղա, դու ընձի մամ։

Պառավ զդուռ կբանա, տղեն կմտնա ներս։ Շատ կծարվրնա, կըսա.— Մարե, քիչ մը ջուր բեր, ես խմիմ։

Պառավ կէրթա, կշռա մեչ սաֆկին, կբերա կիտա տղին։

Տղեն կըսա.— Մարե, էդա ջուր շոռ ա։

Պառավ կըսա.— Քինե պահիմ, աստծուց ի՞նչ պահիմ, յոթ գըլխը-ցեն վիշապ մը կա, մեր քաղքի ջրի հ՝առեչ առեր ա։ Կիրակվընե կիրակի մեկ մեկ շալակ գաթա, մեկ մեկ ախչիկ կտանենք ուրեն, կուտա ղընդոնք, նոր փշուր մը ջուր կթողա բերինք։ Շաբաթ լմցեր ա, ջուր չկա։ Ջուր ուղեցիր, ես լա ամոթու գացի շուի մըչ սաֆկին, բերի տվի քզի։ Վաղ կի-րակի ա, թագավորի ախչկա դորն ա։ Շալակ մը գաթա ու զթագավորի ախչիկ կտանին, նոր կէլնի կուտա քիչ մը ջուր, կբերինք, խմինք։

Տղեն պառվուն կըսա.— Լուսուն օր տարան, ինձի խաբար տաս։

Տղեն կնեղենա, կպառկի քնի, մինչև լուսուն։ Լուսուն զթագավորի ախչիկ ու շալակ մը գաթա կտանին, պառավ տղին խաբար կիտա։

Տղեն կէլնի, ջոջ դևի թուր կապի ուր վրեն, կէրթա ախբրի դուռ կկայնի։ Ախչիկ կտեսնա, որ նստուկ է էդտեղ։ Ախչկան կըսե.— Ես կպառ-կիմ քնիմ, օր հ՝ուշապ էկավ, զիս հ՝իմցուս։

Տղեն կպառկի քնի։ Հ՝ուշապ կէլնի, ախչիկ կիլա ու կլալկի, կաթ մը ադցունք կպատի տղի էրսին։ Տղեն կիմնա։ Տղեն կքաշա զթուր, մեկ կզարկա հ՝ուշապի յոթ գլուխ լա կթռու։ Արուն ու ջուր կխառվի հ՝իրար։ Տալալ կիտա կանչել, կըսա.— Արընջրեր մը տանեք, զհ՝ուշապ սպաներ իմ։

Ախչիկ ձեռ կզարկա մըչ հ՝ուշապի արնին, զտղի պառեկ կտկլոզցու ու կզարկա աղի պառեկին ու կվաղնի, կէրթա թագավորի մոտ։

Կըսա.— Տղե մը զհ՝ուշապ սպանեց ու զիս ազատեց։

Թագավոր զտալալ կիտա խանչել, զախչիկ կկանկըցու։ Ինչքան մարդ մա կիգա կընցնա, ախչիկ կըսա՝ էտ չէ։

Կըսեն՝ մնաց պառվու տղեն մենակ քաղքի մեջ։ Կըսեն՝ տղե՞ն զհ՝ուշապ պտի սպանա։

Զպառվու տղեն օր կբերին, ախչիկ կաչքա զպառեկ, նշան կտեսնա, կըսե.— Իդա տղեն ա սպանի։

Թագավոր կըսա.— Զքու ուզած ուզա՝ տամ։

Տղեն կըսա.— Բան չըմ ուզի։ Բան օր կուզիմ՝ զիս թալիս լուս աշխարհ։

Թագավոր կըսա.— Գնա, ֆլան ծառի տակ, արծիվ մը զուր բուն սուքեր է էն ծառի տակ։ Ինչխադար ձագ կհանա, հ՚ուշապ մը կիգա կուտա։ Օր դու զէն հ՚ուշապ սպանիս՝ զարծվու ձգեր ազատիս, կարելի ա էն արծիվ զքըզի հանա լուս աշխարհ։ Թե չէ՝ ես իմ ունեցած լե տամ, ես չըմ կրնա զքզի հանիմ լուս աշխարհ։

Տղեն կէլնի կիգա ծառի տակ, պառկի քնի։ Կտեսնա օր հ՚ուշապ էկավ, ձգեր ահու կճվճվան։ Տղեն կիմնա, կէլնի թուր մի կզարկա, զհ՚ուշապ կսպանա։ Տղեն էմլա կպառկի, կքնի։ Արծիվ թռման էկավ տեսավ զտղեն, զարկավ օր զտղեն սպաներ, ձգեր էկան արծվուն ըսին.—Էդ տղեն զմըզի ազատիր ա։ Զըս ավտնա, հլա տես զհ՚ուշպու ջանդակ։

Արծիվ կըսա տղին.— Քու ուզածդ ուզա՝ իտամ, օր դու զիմ ձգեր ազատեցիր։

Տղեն կըսե.— Բան չըմ ուզի, բան օր կուզիմ՝ զիս թալիս լուս ախշար։

Արծիվ կըսե.— Քու սուվրցողի աչք քոռնա, ոլա, կարող ենք թալենք, ամա ըխթիյարցեր իմ։ Գնա թագավորից բի յոթ բարնի դմակ, յոթ տիկ լա գինի, բալքի ես քեզի թալիմ լուս ախշար։

Տղեն կէլնի, կիգա թագավորի մոտ։ Կուզե յոթ բարնի դմակ, յոթ տիկ լա գինի, կառնի կիգա, կնստի արծվու պառեկին։

Արծիվ տղին կըսե.— Օր ըսեցի՝ խի, տիկ մը գինի կոռծե իմ բերան, օր ըսեցի՝ խու, դմակ մը թալ, հարի թըմի։

Քանի կըսե՝ խի, զգինին կկոռծե, կըսե՝ խու, զդմակ կթալե, հարի կլմընա։ Դմակ մը կպատի, կորի։ Կտոր մ՚ ուր ճռան մսեն կկտրա, կթալա, արծիվ քիչ մը լա կհանե, կըսե.— Աչքա, լուս ախշար չէրևա՞։

Տղեն կըսե.— Ոլա, քրծ աստղ մը կէրևա։

Քիչ մը լա կհանա, կըսա.— Ոլա, կալի մը չափ կէրևա։

Քիչ մ՚ լա կհանա, կհասնա լուս աշխարք։

Տղին կըսե.— Դե, քելե գնա։

Տղեն օր կքելա, չկըռնա քելա։ Արծիվ կըսա.—Հ՚որի՞ չըս կէրնա քելի։

Կըսա.— Կոմեր իմ։

Արծիվ գինա զան տղի ճռան միս, պահի բերան, չկերեր ի։ Կվերու, դրա վրը տղի ճռան, կվերու զուր թեպուրք մը, կզարկա շուր, քսա վրեն, տղի ճոտ կտաղնա։

Երկու թեպուր ուր թեպրներուց կփրցու, տա տղին։ Կըսա.— Ինչքան նեղ ընկար՝ զարկիս կրակ, ինչ խնդրիս, քեզի կիտա առտված։

Ու կշնոխկլին իրար, արծիվ կդառնա կէրթա։

Տղեն լա խասա կէնա ուր պապի քաղքին։ Կիգա, թեպուրք մի կիտա կրակ, կէղնի հրեղեն ձի, տղեն կհեծնի, կիգա։ Կիգա ուր պապի քաղքի հ՝առեչ։ Հալվորու մը ռաստ կիգա։ Բարև կիտա, բարև կառնի։ Հալվորուց կհարցու, կըսա.— Ի՞նչ կա, ի՞նչ չկա։

Հալվոր կըսա.— Իդա քսան օր ա թագավորի էրկու տղեն զթագավորի պզտի տղեն կորցուցած են։ Ջոջ տղեն կուզա պզտիկ տղի կնիկ պսակա, պզտիկ տղի կնիկ ֆինջան մը ժարի առեր ա, կըսա՝ ինչ գախ պսակեք, պիտի ղէդա ժարին խմիմ ու մեռնիմ, ու ես պտի զքըզի չառնիմ։

Թագավորի տղեն կքշա կիգա պառվու մը դուռ։ Մտնի պառվու տուն։ Պառավ լա ղէղելութեն կպատմա ուրեն։ Ճանկ մը օսկի կիտա պառվուն, զուր մատնիկ լա կիտա պառվու մոտ, կըսե.— Գնա ասա, օր ես խելք չըսովորցում, մարդ չը սովորցու։ Օր գացիր մոտեցար, զմատնիկ կիտաս հ՝ինք, էնի զիմ մատնիկ կճանչնա։

Իմալ օր թարիֆ կէնա, պառավ էնմալ կէնա։

Իդ անգամին կըսա.— Կառնիմ։ Յոթն օր, յոթ գիշեր իդա քաղաք խա-խանդ մնա, մարդ դուս չէլնի, օր ես առնեմ։

Տալալ կիտա կանչել՝ յոթն օր, յոթ գիշեր մարդ դուս չէլնի։

Կէլնի կէրթա խաս բախչեն։

Տղեն լա կիգա էնտեղ։ Ինչ օր էլի ուր գլուխ, տղին կպատմա։

Տղեն զէդի կթալա ձիու թարք, քաղքեն կէլնի։ Ավուր մի ճամբախ կէրթա, ուր շաղըր կզարկա, կնստի։ Թագավոր ասքար կէնա, կէրթա ուր վրեն։ Ինչխադար ասքար կա, զհ՝ըմեն կշարդա։ Էրկու ախբեր լա կիգան ուր վրեն։ Ջոջ ախբեր կսպանա, միշնեկ ախբոր կըսա՝ տվի իմ մամու ծծի խաթրի համար։

Նոր լուր կէրթա թագավորին, կըսին՝ էդի քու պզտիկ տղեն ի էգ հոմար էնիրի։

Թագավոր միլոններով փարա անկճկըլա կիտա, կէլնի կիգա տոլ-զուռնով տղի ու հարսի առեչ։

Կբերա յոթն օր զտղի հարսնիք կէնա, տղեն ուր գլխու գալած թա-գավորին կպատմա։

Ագոնք հասան ուրանց մուրազին, դու լա հասնես քու մուրազին։